անոխակալ և անյիշաչար՝ ընկա՛լ զա-
ղօթս և զխնդրուածս իմ. ոտ̃ պա-
ղատիմ և հայցեմ 'ի քէն վս̃ իմ և
վս̃ ամ̃ հաւատացելոց. մի՛ դարձու-
ցաներ զերեսս քո 'ի ծառայէս. այլ
խոնարհեա՛ յաղաչանս իմ. և լո՛ւր

ինձ մարդասէր. և ցո՛յց յիս զո-
ղորմական քո մարդասիրութե̃դ զողոր-
մութի̃. և խնայեա՛ 'ի մեղուցեալ ծա-
ռայս քո: Տ՛ր կարգեա զիս ընդ աջ-
մէ դասուն. և մի՛ կացուցաներ 'ի
ձախմէ ընդ ուլսն՝ որք զայրացուցին
զքեզ. և մի՛ պահանջեր յինէն զան-
համար պարտիս յանցանաց իմոց:
Տ՛ր մի՛ դատապարտեր զմեղաւորս
յայնժամ. և մի՛ յայտնեսցին ծա-
ծուկք գործք ամբարշտութե̃ իմոյ
յանցանաց յանաչառ ատենին՝ հրեշ-
տակաց տեսանողաց և հրեշտակա-
պետացն և ամ̃ սրբ̃ց քոց սիրողաց.
այլ յաղթեալ 'ի քումմէ մարդասի-
րութե̃դ արասցես այցելութի̃ մեղու-
ցեալ ծառայիս քո. և մի՛ ըստ չար
գործոց իմոց հատուցանես ինձ: Տ՛ր
մի՛ հրամայեր կապեալ ոտիւք և ձե-
ռօք հանել 'ի խաւարն արտաքին.
ուր լալ աչաց է և կրճտել ատամանց՝



այլ

այլ ըստ քում գթութեդ և բարերա-
րութեդ և անյիշաչարութեդ՝ ողորմեա
ինձ բազմամեղիս: Այժմ առուր
զերծո՛ զիս յամօթոյն յաւիտենից.
և փրկեա զիս յանվախճան տանջա-
նացն. ապրեցո՛ զիս յաններելի պա-
տուհասիցն՝ և բա՛ց ինձ զդուռն ո-
ղորմութե քո. և մի՛ փակեր զդուռն
արքայութե տր իմ տր՝ ած իմ ած
յս քս: Արժանի՛ արա զիս զանար-
ժանս յաւուրն յայնմիկ երանութեց
և անապականութե պսակելոց լուսոյ.
և անպատ յաւիտենից ուրախութեց.
և բարեաց հատուցմանց որդն և որ-
դւոյն. և զփառս երանելեացն
վայելել միշտ: Զի մինչ արժանա-
ւորես յառագաստ անմահ փեսայիդ.
և ժառանգեցից զանպատ բարիսն
ընդ ամ սրբս քո՝ մաքուր և յստակ
և սբ սրտիւ՝ համարձակ երեսօք:
Ընհատ աներկց զքեզ է հրեշտակս


և

և ընդ որս սիրոյս վայելեցից զանհաս
զանճառելիդ և զանեզր լոյս Երրոր-
դութեանդ՝ գոհանալով։ և փառաւորահա-
ւասար արասցես ընդ որս քո յօրհ-
նաբանութիւն միշտ արժանացես. հա-
նապազ Աստուածային անստուեր լուսով
քո պայծառացո։ Եւ անդադար
երգովք փառաւորեսցեն զամենասուրբ
Երրորդութիւնդ. այժմ և յաւիտեանս
յաւիտենից Ամէն։

Նորին գործեալ Աղօթք սրբոյն Եփրեմի Ասո-
ցեալ առ Տէր Ած։ Բ

Տէր Աստուած զօրութեանց՝ աղաչեմ
զքո քաղցրութիւնդ. ժամեմ
և հայցեմ ՚ի քէն. տուր
ինձ տապան ապրեցուցիչ որպ-
նոյին. ապրեցուցիչ ինձ ՚ի հրեղէն
ծովէն և յանդնդային հրահոսանացն.
յանշէջ արգելանէն և յանհնարին
վտանգիցն. Օ՛ն դու ես Տէր Ած՝ որ


զբանդ

զբանդ ա՟ծային ժամկեցեր և՛ի ժա-
ռայական կերպս իջեր վ՟ն իմ․ զլեղի
՛ի քիմս առեր և ապտակ ՛ի ծնօտս
ընկալար ։ Նո՛ր այժմ աղաչեմ զքեզ՝
ազատեա՛ զիս ՛ի դառն ծառայութե՟ն
սա՟նյի․ զի յորժամ զձեռս իմ ՛ի վեր
ունելով աղօթեմ, անօրէն սատանայ
խաբէ և ունայն հանէ զիս ՛ի յաղօ
թից իմոց ։ Տ՛ուր ինձ ա՟ծ բերդ ա-
մուր․ և կորզեա՛ զիս յառիւծոյն
որ հանապազ կամի կլանել զիս ։
Զի ընդ պատանիսն փառաւորեցից
՛ի բարձունս զՀ՟այր և զՈրդի և զՍ՟ուրբ
Հոգին․ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ։

ամէն ։



Գ.

Տէր մեր յիսուս քրիստոս երկնի և երկրի. իշխան կենաց և մահու. դատաւոր կենդանեաց և մեռելոց: Գթա առ իս յոյս և ապաւէն հոգւոյս իմոյ՝ քեզ խոնարհեցուցանեմ զերկրպագութիւնս և մատուցանեմ զխառնաբանութեան մաղթանս: Լուր պարգևիչ հայցուածոց իմոց՝ որ միայն ես առանց մեղաց. որ միայն ես տր և ի տրս հանդուցեալ. որ միայն ես գթած և ողորմած:

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. և ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ:

Ստեղծիչ իմ ողորմեա ինձ և օրհնեա զիս. երևեցո զերեսս քո առ իս և հաշտեա ընդ իս: Սրբեցուցիչ իմ



դարձ

դարձ առ իս և երևեցո զերեսս քո
և յիշեա զիս յարքայութեան քում:
Դարձ առ իս տէր փրկիչ իմ. և դար
ձո զսրտմտութիւնս քո յինէն:
Մի՛ յանխտեան բարկանար ինձ. և
մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն:
Մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս. և
մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս
Մի՛ յանխտեան բարկանար ինձ. և
մի՛ յիշեր զչարիս իմ. և մի՛ պատու-
հասեր զիս ըստ իմում անօրէնութեանս:
Մի՛ իսպառ բարկանար ինձ. և մի՛
յանխտեան պահեր ոխս:
Մի՛ ըստ մեղաց իմոց առներ. և մի՛ ըստ
անօրէնութեանս իմում հատուցաներ ինձ:
Մի՛ ընկեսնուր զիս յերեսաց քոց.
և մի՛ խնդրեր զգիր յանցանաց իմոց.
և մի՛ դատապարտեր զիս: զի ես
ինձէն դիտեմ որ անուղղայ եմ և
յանցաւոր ՚ի մանկութենէ. և ան-
պատասխանի եմ յամի:

Արդ դու դատաւոր հզօր և անոխա-
կալ. որ զյանցանս թողեր անառակ
որդւոյն՝ թո՛ղ և ինձ զպարտիս մեղու-
ցեալ և անօրինեալ քո ծառայիս:
Քանզի քո առատ բարերարութիւնդ
յայնժամ երևեսցի, յորժամ ինձ
ողորմիս. որ չեմ արժանի ողորմութեան
քում, յարաժամ յիս ցուցանես զեր-
կայնմտութիւն քո. որ արժանի եմ բիւ-
րուց տանջանաց. զի զա՛մ աւուրս
իմ անառակութեամբ անցուցի և ոչ կացի
'ի հրամանի քում:

Արդ քաղցրացի՛ր ինձ բարի և քաղ-
ցր թագաւոր: և հաշտեա՛ց ընդ
բազմամեղիս. և մի՛ դարձուցաներ
զերեսս քո յինէն. և մի՛ խոտորեր
բարկութեամբ 'ի ծառայէ քումմէ:

Մի՛ հայեր յանհնազանդութիւնս իմ և
'ի պղերգութիւնս: Մի՛ անտեսեր զիս
և մի՛ թողուր զիս. և մի՛ ընդ վայր
հարկանիր զիս: զի թէպէտ ես զտա


ձար

ճար հոգւոյդ Տ՟րյ ապականեցի իմով_
ծուլութ՟բս և անառակ գնացիւքս ,
այլ դու գթա՛ յիս ստեղծիչ իմ ո_
ղորմած և անյիշաչար . և մի՛ ապա_
կանէր զհոգի իմ գեհենաժառանգ
այրմամբ յաւիտենականաւ :
Ա՛յլ գթացեալ մարդասիրապէս՝ եր_
կայնամիտ լեր առիս . և ներեա՛ յան_
ցանաց իմոց : Եւ՛ շնորհեա՛ ինձ ժա_
մանակ ապաշխարութ՟ե և զղջ՟ման ար_
տասուաց . և տո՛ւր իմաստութ՟ե խոր_
հիլ զօրէն քո 'ի տուէ և 'ի գիշերի .
գործել զբարի և առնել զարդարու_
թ՟ի առաջի երեսաց քոց :
Համբառնամ առ քեզ Տ՟ր զաչս իմ
բոլորով սրտի՛ իմով . կարդամ առ
քեզ Ք՟ս Ա՟ծ միածին որդի Ա՟յ՝ կեր_
պարան անեղին և համագոյ Ս՟բ հոգ_
ւոյն : Որ յաղթեալ 'ի մարդասիրու_
թէդ քումմէ , կամաւ խոնարհեցար
յանձնառ փառացդ . և առեր զծ՟ոյի
կեր

կերպարանս. և անպարտականդ՝ յաղագս դատապարտութեան մերոյ համբերեցեր մինչև զչարչարանս խաչի և մահու յանձն առեր վասն փրկութեան ստեղծուածոց քոց:

Արդ՝ որ զայսպիսի սէր ունիս առ ազգս մարդկան՝ և կամիս զի ամենայն մարդ կեցցէ և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ, գթա և յիս 'ի բազմամեղս գթած և մարդասէր տէր. և կամեցայ ընդ իմ փրկութիւն և արա ինձ ողորմութիւն եղկելոյս և թշուառականիս. որ առաւել վիրաւորեալ եմ և ողորմելի քան զամենայն մարդիկ: Ո՛ի ո՛չ և մի օր սիրեցի զքեզ 'ի բոլոր սրտէ իմմէ. և ո՛չ մի ժամ յամենայն զօրութենէ իմմէ պահեցի զպատուիրանս քո. այլ պղերգութեամբ և զբօսանօք անցուցի զաւուրս իմ. և աղտեղի խորհրդովք անցուցի զամենայն կամս իմ: Աւուրք իմ պակասեցան և անօ

րէնութիւնք իմ բարձրացան · և ո՛չ գոյ
ինձ յոյս փրկութեան և տեղի ապաւի-
նի · բայց միայն յուսացեալ եմ 'ի
քո բարերարութիդ, և ապաւինեալ
յառատ ողորմութիդ ։

Ի՛ր որդ՝ անկեալ ընկղմամբ ար-
տասուաց աղաչեմ զքեզ · պաղատիմ
մինչև եմ կորուսեալ · և մինչև է
ժամանակ դարձի իմոյ հասեալ · շնոր-
հեա ինձ ապաշխարութի · և յռջ քան
զվախճան արձակեա զիս 'ի կապանաց
մեղաց իմոց · և անտես արա զան-
թիւ անօրէնութեանս իմ ։

Որ ա՜մ բարութեց ես տ՜ր · և իշխանդ
ես թողուլ զմեղս՝ ծածկեա՛ զա՜մ
անօրէնութիս իմ քոյով մեծութբդ · և
մխիթարեա՛ զվշտանկեալ և զտարա-
կուսեալ հոգի իմ ։ Եւ՛ արժանաւո-
րեա՛ զիս յայսմհետէ ըստ կամաց
քոց քաղաքավարել զաւուրս պան-
դխտութե իմոյ ժամանակս · եթէ



չկա_

չկամիմ, բռնադատեա՛ զիս։ Եւ մի՛ թողուր ՚ի կամս անձին իմոյ. մինչեւ տարեալ հասուցես յօթեւանս արքայութեանդ երկնից։

Լո՛ւր տէր աղօթից անարժան ծառայիս քո. եւ պաղատանաց իմոց ունկնդիր։ Որ ասացեր թէ՝ հայցեցէք եւ գտանիցէք. բախեցէք եւ բացցի ձեզ։ Նո՛ւ այժմ բա՛ց ինձ տէր զդուռն ողորմութեան՝ որ ողբալով կարդամ առ քեզ. եւ մի՛ անտես առներ զաղաչանս մեղուցեալ անձին իմոյ։ որ ոչ եկիր կոչել զարդարս. այլ՝ զմեղաւորս յապաշխարութիւն։

Արդ՝ խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիւ, եւ ամօթալից երեսօք, ընկանիմ առաջի քո. չեմ արժանի կոչիլ որդի քո վասն ապականեալ վարուց իմոց. եւ ոչ անուանել զանուն քո՛ գարշ եւ աղտեղի բերանով իմով։ Այլ համարձակիմ ՚ի գը



թութ

Թուի քո․ զի գիտեմ զքեզ քաղցր եւ անոխակալ՝ բազմախնամ եւ երկայնամիտ առ արարածս քո․ եւ յաջողս այսորիկ ժուժկալ պաղատիմ առ քեզ։ Ո՜վ յառաջ քան զդնել ատեննին աղաչեմ․ եւ նախ քան զփակել դրանն ապաշխարութե՟ եւ հատանել անդարձ վճռին՝ զարտասուս իմ արկանեմ առաջի անոխակալ գթութեդ քո օղորմած Տ՟ր․ երկայնամիտ քաղցր եւ անյիշաչար։

Մի՛ ք՟ քանքարաթաղացն դատապարտեր զիս․ եւ մի՛ ք՟ յիմար կուսանացն փակեր ինձ զդուռն արքայութե՟ քո։ Մի՛ ընդ չար եւ վատ ծառայիցն զիս լծակցեր․ եւ մի՛ ընդ հերձուածողին դներ զբաժին իմ։

Մի՛ ընդ պոռնիկսն եւ ընդ չարագործսն կորուսաներ զիս․ եւ մի՛ ընդ անհաւատորսն եւ ընդ շաղախեալսն հոգւով հաներ զիս ՚ի կենաց։

Ա՛ռ զերծո՛ զիս յանզերծ տանջանացն
և ապրեցո՛ յանհանգիստ ալէկոծու-
թենէն: Փրկեա՛ անմահ 'ի մահուա-
նէ. և ազատեա 'ի յաւիտենական
ամօթոյն. զերծո՛ 'ի միշտ լալոյն և
'ի հանապազորդ ողբալոյն:

Մի՛ մերժեր զիս 'ի քո դասուցն.
և մի՛ տարագիր առներ յերանա-
ւէտ կենացն: Մի՛ անբաժին հաներ
զիս 'ի հայրենի ժառանգութենէն. և մի՛
զրկեր զիս յերկնաւոր հարսանեացն:
Մի՛ կարօտ պահեր զիս 'ի քո անճա-
ռելի տեսութենէդ. այլ շնորհեա ինձ
ընդ արժանաւորսն, և ընդ կատարելա-
ոցն, վերանալ լուսեղէն ամպօք
ընդ առաջ քո յօդս. և պարզ երեսօք
և աչալրջութեամբ կալ առաջի քո:

Եւ մինչ քո փառաւորեալ հզօր և
ահեղ թագաւորութեամբդ, մի՛ մոռանար
'ի դատաստանն ընդ ծառայիս քո.
և մի՛ հատուցաներ ինձ ըստ իմում



անօ

անօրէնութեանս. և մի՛ ամաչեցուցաներ
զիս առաջի անթիւ և անհամար բա-
նակաց քոց: Այլ ողորմեա ինձ՝ զի
ո՛չ ոք է հակառակ քեզ. և պարգե-
ւեա ինձ զարքայութիւնդ: Ընդ սրբս քո
դասեա՛ և ընդ արդարսն պսակեա՛.
ընդ սիրելիս քո օրհնեա՛ և ընդ կա-
մարարս քո կամաց քոց 'ի յարագը-
ւարձ ուրախութեանն ուրախացո՛:
Ո՛վ առատապարգև փառօք փա-
ռաւորեալ զիս որ 'ի լուսեղէն ե-
րամս արդարոց՝ ընդ նոսին հանդ-
չել 'ի վերինդ երուսաղէմ յանսասո-
ւէր և յանծախեաց ուրախութիւնդ:
Ո՛ ի ընդ նոսին համաձայնեալ փա-
ռաւորեսցի զամենասուրբ Երրորդու-
թիւնդ. այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն:



Աղօթք

Աղօթք յորժամ յորոգայթ անկանի ոք. Ասացեալ սրբոյն Գրիգորի մեծի լուսաւորչին։

Դ.

Օրհնեալ է մարդասիրութիւնդ քո տէր իմ և փրկիչ յս քս ընդէ՞ր լքանես զիս. դու միայն ես առանց մեղաց. և անուն քո զանոխակալութիւն և զմարդասիրութիւն ցուցանէ. գթա յիսուս զի դու ես միայն մարդասէր։ Մերժեցո՞ զիս զանկեալս ի մեղս. զի դու միայն ես առանց մեղաց։

Հան զիս ի տղմոյ անօրէնութեան իմոյ զի ընկղմեցայ յախտենս յախտնից։ Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց. քանզի առհա՛ւ իբրև զառիւծ գոչէ և մռունչէ կամելով կլանել զիս։ Արդ տէր իմ փայլատակեա՛ զփայլատակմունս քո. և կործանեա՛ զզօրութիւն նց. երկիցեն և խաւարեսցին յերեսաց քոց. քանզի անկար է և ոչ

ունի զօրութ̃ կալ առաջի քո տր̃. և
ոչ առաջի երեսաց ահրողաց քոց:
Տեսանէ զզօրութ̃ նշանի խաչի քո տր̃
և զորհուրդն. և ամաչելով երայց հեռա-
նայ յայնցանէ որ կարդան առ քեզ:
Այժմ տր̃ կեցո և ապրեցո զիս.
վս̃ զի 'ի քեզ ապաւինեցայ. հան 'ի
ներքուստ զանձն իմ. զի մի՛ խապառ
կորուսցէ զիս նենգաւորն որ մար-
տընչի ընդ իս ծածուկ նետարիւք:
Որ խորհրդոց ես տր̃՝ և քննես ըզ-
սիրտս և զերիկամունս՝ սրբեա ըզ-
սիրտ իմ և զխորհուրդս 'ի գարշից և 'ի
պիղծ խորհրդոց. զի մի՛ խապառ կո-
րուսց 'ի յաւիտենական կորուստն:
Որ կարող ես տր̃, ողորմեա ինձ
ա̃ծ իմ. տուր շնորհ արտասուաց
մեղուցեալ հոգւոյս. ոպ̃ զի լուացից
զաղտմութ̃ մեղացս. զի ապրեցայց 'ի
ձեռաց անողորմ հրեշտակաց որ արկա-
նեն զամբարիշտսն 'ի հուր գեհեննին:

Նորանն թէ լոյս համապայծ աղաչե-
լով զքեզ ա՜ծ՝ զի մի՛ անարժան զը-
տայց 'ի ժամուն յորժամ գայցես և
մի՛ լուայց զահաւոր զձայնն զայն,
թէ երթ 'ի բաց մշակդ անիրաւու-
թե ոչ գիտեմ ուստի ես ։

Ով բարձրեալ միայն առանց մեղաց.
շնորհեա՛ ինձ մեղաւորիս յաւուր
յայնմիկ զբազում գթութի քո. զի մի՛
յայտնեսցին ծածուկ ամբարշտութիւք
իմ առաջի անտաղաց հրեշտակաց և
հրեշտակապետաց՝ մարգարէից ա-
ռաքելոց և արդարոց սրբոց ։

Ով ապրեցո՛ զիս զամբարիշտս շնոր-
հօք ողորմութե քո ։ Ընկա՛լ զիս 'ի
դրախտն փափկութե ընդ կատարեալ
արդարսն ։ Ընկա՛լ զաղօթս մեղու-
ցեալ ծառայիս քո բարեխօսութե սբցն
որք հաճոյ եղեն քեզ յ՜ս ք՜ս տէրդ
մեր ։ Եւ քեզ ընդ հօր և ս՜բ հոգ-
ւոյդ փառք յաւիտեանս յաւիտե-
նից ամէն ։

Նորին աղօթք սրբոյն Գրիգորի մերոյ.
Լուսաւորչին ։

Ն

Աղաչեմ զքեզ փրկիչ աշխարհի քո. հայեաց յիս և ողորմեա ինձ. փրկեա զիս 'ի բազմութէ անօրէնութե իմոյ. քանզի անարգեցի զանուն բարձրին զոր արարեր յիս 'ի մանկութէ իմմէ ։ Ո՛, ես զտխմարս՝ զտգէտս և զանիմաստս՝ արարեր անօթ լի՛ գիտութե. յաճախեաց յիս շնորհն քո՝ և լցոյց զքաղց իմ և զծարաւ իմ զովացոյց. և լուսաւորեաց զխաւարեալ միտս իմ. և ժողովեաց 'ի մոլորութէ զխորհուրդս իմ, և եդիր 'ի ծոց իմ ։

Այժմ երկիրպագանեմ և աղաչեմ, անկանիմ և հայցեմ խոստովանելով զքումդ բարերարութիւնդ. կատարեա յիս զխոստումն շնորհի քո և պահեա զնա 'ի գանձի քում. զի դարձեալ



տաս

տայցես ինձ յաւուրն յայնմիկ ։

Մի՛ բարկանար ինձ մարդասէր․ զի ոչ հանդուրժեմ սպառնալեաց քոց․ յաղագս այսորիկ աղաչեմ ծը տեղով՝ զի առաւել քան զչափն յաճախեաց յիս․ վա՜ զի լեզու իմ տկարացաւ ոչ կարելով խօսել զշնորհէ քումմէ ։ հիացեալ և միտք իմ ոչ բերելով զբազմութի ալեաց նր․ Կերպարան և ճառագայթ օրհնելոյ հօրդ՝ դադարեցո՛ առիս ՚ի հոսանաց նր․ զի իբրև զհուր բորբոքել բոցակիզէ զերկրաւորս իմ և զհրիմ ։ Ընդր դարձեալ պարգևեա ինձ զնա և կեցո՛ զիս յարքայութե քում։ Մի՛ յիշեր զանօրէնութիս․ յանդգնիմ՝ հայցեմ տո՛ւր ինձ զխ՟դրուածս իմ․ և արա՛ օթևանս օրհնել հարբ քո յաւուր յայտնութե ։ Շնորհեա ինձ քո՛ զհայցուածս իմ․ զի դու միայն ես տուօղ կենաց իմոյ։ Եւ՛ քեզ փառք յաւիտեանս յաւիտենից Ամէն ։

Սրբոյն Աթանասի և Սրբոյն աբբայ Եփրեմի Ասա-
ցեալ Խոստովանութիւն, 3:

Ե՛ւ արդ՝ հրաժարելով ՚ի սատանայէ՛ և յամենայն խաբէութենէ նորա, ՚ի պատրանաց նորա ՚ի գնացից նորա. և ՚ի պաշտօնէից նորա և ՚ի հրեշտակաց նորա. եկեալ առաջի քո եկեղեցւոյ՝ խոստովանիմ և հաւատամ զհայր անըսկիզբն՝ զորդին միածին ծնունդ ՚ի հօրէ, և զսուրբ հոգին բղխումն ՚ի հօրէ: երեք անձամբ և մի բնութեամբ և մի աստուածութեամբ, անշփոթ միաւորութեամբ: Ե՛ւ զանճառ տնօրէնութիւն մարդացելոյ բանին աստուծոյ:

Ե՛ւ արդ՝ ես դեւլիս և պարտաւորեալս և որքան բան զօրէ դաւանելիս՝ մեղայ ամենասուրբ երրորդութեան հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: մեղայ և սրբուհւոյ աստուածածնին և սրբոց հրեշտակաց և առաքելոց ընտրելոց սրբոց դասուց, մեղայ և սուրբ մարմնոյն քրիստոսի և պաշ-



տելի

տելի արեանն: յիմանալիսն և՛ի զգա
լիսս, անդէպ մտածութ անհերևոյթ
սխալանօք. անճառ խառնարային այ
լանդակ խորհրդով: Մեղայ մեղայ
և հոգւովս և մարմնովս և միօքս՛ և
բանիւ՛ և գործով՛ և գիտութ և ան
գիտութ կամաւ և ակամայ: Եւ
ամ մարմնովս, ՅԿԵ զօդուածովքս,
երկոտասան անդամօքս, Ե զգայութքս
Աչօքս յարատ հայելով, և զամ գե
ղեցկութիւն նկարացն զննելով. և զվատ
թարին տեսանելով: Ականջօքս չա
րին ունկնդնելով. և զամ քաղցրաձայ
նութ: Հոտոտելեօքս զմեղաց հոտն
առնլով և զամ անուշահոտութիւն:
Բերանովս՛ զհամադամ քաղցրութիւն
ճաշակելով, և զխառնակ և զան
օրէն անդխութ: Ձեռօքս բազում
մեղս շօշափելով: Ոտօքս յանպատ
շաճ տեղիս գնալով: Մեղայ այ մե
ղայ և վեց շարժմամբս ՛ի վեր հը



պար

պարտութիւն, 'ի վայր տրտմութիւն։
Յառաջ յանդգնութիւն, յետոյ
սրտմտութիւն։ Յաջ հոգեկան մեղօք,
Ձախ՝ մարմնական մեղօք։

Մեղայ և տեսան պատգամացն քո՛
յանձնառականին և հրաժարականին։
զյանձնառականն չեմ կատարեալ և
զհրաժարականն եմ արարեալ։

Մեղուցեալ եմ քո և հոգևորական
կնքուքս, հանդերձ զգայութեամբքս և մտօքս։
և ամ շփոթմանց հետևելով, և
ամբոխելով զիս 'ի յԱստուածահաճոյ հան
դարտութենէն հեռացեալ եմ։ Ն՛
այսպէս խաւարամած լինելով է մա
մահու չափ մեղօք մոլորեալ եմ։

Հպարտութիւն, ամբարտաւանութիւն,
ամբարհաւաճութիւն, գոռոզութիւն, սնա
փառութիւն, փառասիրութիւն, պատուա
սիրութիւն· զգեստասիրութիւն, պճնելով,
անձնահաճելով, կեղծաւորելով,
սուտ առաքինի ձևանալով, զաղօթս

'ի ցոյցս մարդկան առնելով անարժա-
նութ յեկեղեցի մտանելով 'ի խաչ
և 'ի բուրվառ և յաւետարան մերձե-
նալով, և կարդալով:

Մեղայ այ և Թիւր խոստովանելով,
և զմեղս պատճառելով, խեթիւ և
ատելութ և անմաքուր վարուք և
անսբ հոգւով զքն պատարագելով.
զած հայր հայհոյելով, զորդին այ
արհամարհելով, և զսբ հոգին թշնա-
մանելով, և զանբարկանալին ած 'ի
բարկութի շարժելով 'ի վր իմ և
մարդկան: Ահ որ յերեւելիս ածա-
պաշտ և աղօթող և պահեցող, և 'ի
ծածուկ Թերահաւատ և ծոյլ, և
յամ բարեաց ունայն: Յերեւելիս
կուսան, և 'ի ծածուկ վավաշոտ:
Յերեւելիս ժիր, և 'ի ծածուկ Թոյլ
Յերեւելիս սբ, և 'ի ծածուկ պիղծ:
Յերեւելիս պարկեշտ՝ և 'ի ծածուկ
ագահ: Յերեւելիս ողորմած, և 'ի


ծա

ծածուկ անողորմ։ Յերևելիս աղ-
քատասէր՝ և՛ի ծածուկ աղքատա-
տեաց։ Յերևելիս առաքինի, և՛ի
ծածուկ պղերգ։ Յերևելիս գո-
վելի, և՛ի ծածուկ պարսաւելի։
Որդ՝ զո՛րս առաջին և կամ զո՛րս թը-
ւեցի. երբ ո՛չ եղը կայ և ո՛չ թիւ։
Մեղուցեալ եմ կարդ. ես զանձս ընդ
արդարս համարելով. և զայլս քա-
մահելով։ Զտօնս տ͞րց ո՛չ մեծարե-
լով. և հայհոյութ͞ մեղուցեալ եմ
ա͞յ։ զանունն միայն ունիմ քահանայի
և ո՛չ զգործն. զօրհնակն ունիմ և
ո՛չ զճշմարտութիւն. քանզի ի͞մ ան-
պատրաստութ͞ և անկարգութ͞ կալով
զմահուն օրն և զանաչառ դատաս-
տանն ա͞յ և զդժոխոց ահն և զար-
քայութ͞ սէրն մոռացայ. կամապաշ-
տելով. հակառակելով, անհնազանդ-
լինելով։ ՚ի հեզութ͞ և՛ի խոնարհութ͞
փախչելով. զծերսն չպատուելով.

զծնօղսն չսիրելով: ստահակութիւն շրջելով, մեղուցեալ եմ:

Մեղայ ծոյ և բարկացողութիւն, ցասմամբ, սրտմտութիւն, գազանաբար յարձակելով, և զեղբարս խածանելով· կագ և կռիւ առնելով, և յիշոցք տալով, 'ի չար կարծիս դատելով· խռովկալով, սուտ հաշտութիւն առնելով· և զհոգիս իմ կորուսանելով, և բարս գազանի ունելով, և զանբան անասունս անխնայ հարկանելով· 'ի մարդկան սիրոյն որոշելով, պառակտումն առնելով, բանսարկելով, խարդախելով, խորամանկելով, երկմտելով, թերահաւատելով· բազում տրտունջ և նզովք հանելով· զուր և անիրաւ զրպարտելով· քրրթմրնջելով, շողմոգելով:

Մեղա՛յ մեղա՛յ մեղա՛յ, և նախանձ ունելով· մախալով, դիմադարձելով, ոխակալութիւն· ատելութիւն քինահաձութիւն,

Թք , չարութք , նենգելով , քամահե-
լով , գշարելով , սուտ վկայելով , բամ-
բասելով , արհամարհելով . և զառաջ-
նորդս եկեղեցւոյ և զվարդապետս ,
և զծերս՝ և զտղայս , և զայլոց ի-
րաւն սուտ առնելով , և զիմ սուտն
իրաւ . զայլոց փոքր մեղքն մեծ հա-
մարելով , և զիմ բազումս ծածկե-
լով , զայլոց շիւղն գերան կարծե-
լով , և զիմ գերանն շիւղ . զայլոց
բարին չար ասելով , և զիմ չարն բա-
րի՛ , զայլոց լոյսն խաւար տեսանե-
լով , և զիմ խաւարն լոյս . զայլոց
առաքինութին մարդահաճութի դատե-
լով ; և զիմ մարդահաճութիս առաքի-
նութի . և յանդուգն լինելով ՚ի մէջ
բանից անկանելով , լրբելով . ՚ի խրա-
տուց երես դարձուցանելով՝ և առ̄ջի
ծերոց լռութք ոչ կալով . և հրամա-
նաց և բանից նց՝ ոչ լսելով : Ուխտա-
դնելով և ոչ կատարելով . և անյու-

 սու

սութք 'ի խորս տրտմութեան անկանե-
լով. զպատուէրանս այ արհամարհե-
լով: սբ գրոց ունկն չդնելով: 'ի սբ
հրեշտակէն իմմէ չանսալով: և 'ի
բարեաց թափուր լինելով: ընդ չար
ին խնդալով: զբարեկամին ատե-
լով: զթշնամին չսիրելով, զատե-
լեան այ չատելով:

Ա՛ թէ զորքանութին որչափ կարացից
յայտ բերել՝ որ բազում են քան զա-
ւազ ծովու: քանզի մեղուցեալ եմ
այ և ագահութք: արծաթսիրութք.
խաբելով: աւելի առնլով և պակա-
սալով: վաճառասիրելով: կծծելով
դատղ գողանալով: յայտնի յափշտա-
կելով, և զրկելով: Ա՛ւելի ստանա-
լով, աղքատին չողորմելով, ու օ-
տարաց չգթալով: զեղբարս չսիրե-
լով, զկարօտեալսն չդարմանելով,
զհիւանդսն չատեսանելով, տկարին
չսպասաւորելով: զաղքատս արհա-



մար

մարհելով, զհարուստն գովելով, յաղողելոյն ծառայելով, ունեւորայն սուտ հաճուէ առնելով, աչառելով, և մարդահաճոյ լինելով Աստուա երդուելով, և զնմ 'ի բարկութի շարժելով:

Մեղայ մեղայ և քան զհող երկրի ծանրագոյն մեղայ, քանզի մեղայ այ, և Երկրպագութէ. 'ի կերակուրս և յըմպելիս ցանկանալով: անէլի առնելով և անյագ ուտելով. զորովայնս խնճողելով: առանց ժամի և ժամ արձակի ճաշակելով. զպահսըն արհամարհելով, առանց մեծի հիւանդութե զգինին ըմպելով. զմարմնոյս դարմանն հոգալով. զորովայնս պաշտելով, և խաչին քի թշնամի անուանելով, և լուսաւորչին կանոնաց սև երես լինելով: Մեղուցեալ եմ ի մոք կարգիս, ծուլութե, և հեղգութե, անժուժկալ լինելով:

 ոգի

տրտմանալով զուարճ ատելով: դա-
տարկ կենալով, զոր գիրս ոչ կար-
դալով, քնով դանդաղելով, և՛ի ժա-
մատեղն ծանրանալով, արթուն ոչ
կալով, և պատմութեն ոչ միտ ոչ
դնելով. բազմախօսութին առնելով:
սաղմոսն ականջ ոչ դնելով և կամ
ձեռագործով յապաղելով. յօրան-
ջելով. ձգտելով. ձանձրանալով: և
յոյժ ոչ երկնչելով: 'ի հրապարակ նստե-
լով՝ շատախօս լինելով, 'ի թատերս
և՛ի ծաղրս լկտեաց հեշտանալով և
ծաղր անելով:

Մեղայ այ մեղայ մեղայ և պոռն-
կական խորհրդով: գիճութբ, աղ-
տեղութբ, բղջախոհութբ, վաւաշոտ
ցանկութբ, զանազան և զազիր խոր-
հրդով 'ի գիշերի և՛ի տուընջեան պէս-
պէս կերպարանօք քնով և արթնու-
թբ: և սրտա հայելով: կատակ եր-
գելով, անամօթ լինելով: լրբելով.


ցով:

ցով խօսելով, և տռփական մարմնա-
շարժութբ զմիտս աղտեղելով, առ
իգականս և առ արուականս ։ առ
անասնականն ապականեալ խորհր-
դով մեղանչելով, և առ ամ մոլորա-
կան պատրանս, և երազական փոր-
ձութեց ։ քնոյ և արթնութե. որ 'ի ժա-
մու և տարաժամու անկեալ է 'ի
վր տառապեալ հոգւոյս, զոր չա-
րին յօժարութբ մեղուցեալ եմ այ ։
Եւ արդ՝ ահա յայտնեալ հրապարա-
կեցի զորպիսութի մեղաց իմոց առա-
ջի ան և ապաշաւեալ զղջացեալ
եմ յամե, և եկեալ 'ի խնդիր թո-
ղութե սխալանաց իմոց ։
Եւ դու հայր մեր և ած տէր՝ հայ-
ցեա՛ զգթութին այ. և շնորհեա՛
քաւութի ինձ յայ, հրամանաւն՝
զոր ունիս 'ի քէ այ ։ Որում փառք
և գոհութիւն
և այլ'' ։

Աղօթք արձակման Առաքելամեծի բարունակե-
տին Գրիգորի. 34.

Ողորմեսցի քեզ մարդասէրն
ա̄ծ, և թողութիւն շնորհեսցէ
ա̄մ յանցանաց քոց խոստովանելոց-
լոցն և մոռացելոցն. և ես կարգաւ
քահանայական իշխանութեն և հրամա-
նաւն ա̄ծային, թէ զոր արձակեսջիք
յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս.
նովին բանիւն արձակեմ զքեզ յա̄մ
մասնակցութէ մեղաց քոց 'ի խորհր-
դոց 'ի բանից և 'ի գործոց՝ յանուն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:
Եւ դարձեալ տամ զքեզ 'ի խոր-
հուրդս ս̄բ եկեղեցւոյ. զի զոր ինչ
գործեսցես բարիս՝ եղիցի
քեզ 'ի բարեգործութի
և 'ի փառս հան-
դերձեալ
կենացն.
Ամէն:

Օ.

Անսկիզբն Ած և անհասանե
լի՝ բայց զուշս սրտիս իմոյ բա
նիւ գիտութ քո՝ բաւական լինել
գոհանալ զանուանէ քումմէ. գո
վել և փառաւորել զքեզ և արժա
նապէս գնալ ՚ի ճանապարհս քո:
Գթառատ արդար՝ երկայնամտեա
առ իս բազմամեղս քոյով մարդասի
րութեամբդ. զի եղերեալ եմ մեղօք՝
զեղծեալ անօրէնութբ. և զաղիր զի
ջութե զմարմնոյ իմ ապականեցի:
Որ էիր յաւէժ էականութբ Ած ընդ
հօր՝ ընդ մեզ հաճեցար բնակել ընդ
հողեղինացս. և ընդ մարդկան շրջե
ցար ը մեղաւորացս. թո՛ղ ինձ զմեղս
իմ և թեթևացո զծանրաբեռնեալս.
ժառանգել հայցեմ ՚ի քէն, զի ժամանակ
է աշխարհին: ՚Ի քէն հայցեմ
բազում ողորմ ինձ աղբեւր կենաց՝

լուսաւորեա՛ զաչս սրտի իմոյ լուսով
գիտութե քո։ Յո՛յս իմ Քս· ծագու-
մն անճառելւոյ լուսոյ· կեանք՝ ո-
րոց սիրեն զքեզ· կերակուր անսպա-
ռելի· կենդանութի յաւիտենից։
Հրով հոգւոյդ Տր՝ հալեա՛ զսառուցումն
ձմեռնացեալ սրտի իմոյ· որ ծուլեալ
է եղկելի գործօք անօրէնութեան.
Ողողեա՛ քո Ածային զօրութեդ զա-
նուղղայ խորհուրդս իմ չար ուղե-
կանին սատի կենացս։ Դ՛րագ ձգի՛ւր
տութե և ճառագայթաւոր՝ մերկեա
յինէն զխաւար մըթացեալ մտացս։
Զեղկելիս մեղօք յիշեա՛ քո Ածու-
թեամբդ յահագին աւուրն յայն-
միկ ահեղ մեծի դատաստանին։
Ալեկոծելոյ նաւահանգիստ՝ և լիու-
թի ունայնացելոյս աղքատութե և
սնոտիս զանօրէնութի չար գործոց։
Ի չարիս չարչարեալ է անձն իմ·
զինչ ոչ սուրբ մեղուցեալ անձամբս·

պէս պէս ախտիւք պղծեցայ յանառակութե̃ · զրկեցայ 'ի հայրենական լուսոյն · Ընծայի զձեռագիր որդեգրութեան կենաց ջեռուցի զհուր յաւիտենական :

Սրտիւ կարդամ առ քեզ՝ ամենասբդ ած · վտանգելոյս օգնական · վիրաւորելոյս բժիշկ · տեղի տարակուսելոյս · կորուսելոյս խնդրող · մոլորելոյս և գերելոյս դարձուցիչ · ապաւէն ամցուն որք կարդան առ քեզ : Տէր տառապելոյս և տարակուսելոյս գերելոյս 'ի սատանայէ զմեծ քո զողորմութիւն :

Ահա՛ հասեալ եմ 'ի դուռն մահու չարաչար գործովք իմովք · զաչս իմ 'ի վեր համբառնամ առ բարձրեալ տրդ և բարերար · հայցեմ 'ի քէն բաց զդուռն ողորմութե̃ մեղուցելոյ հոգւոյ իմոյ · որ բացեր աւազակին զդուռն դրախտին քո · և մի՛ ամօթա

ելոյ դարձուցանել զիս 'ի քո առատ ողորմութիւն. զի գնեալ եմ սրբ. արեան քո. յիշեա զիս և ողորմեա ինձ ամծ:

Որ անեղ և անսկիզբն ես՝ անստեղծ և արարիչ ամ. արարածոց. որ ոչ աշխարհս տանել զքեզ կարէ, և ոչ երկինք բովանդակել կարեն. 'ի վեր ես քան զերկինս և անհուն քան զծովս. Երկինք և աներ՝ ոլորտք բովանդակեալ են առաջի քո:

Դու ունիս ամենազօրութիւն և հրամանաւ քո կառավարին ամ. արարածք:

Դու աղքատացուցանես և դու մեծացուցանես. դու սպանանես հարկանես և բժշկես: Դու ես ամ. իմ և փրկիչ վտանգելոյս 'ի սմանէ. առողջացուցիչ հիւանդիս մեղօք. ընդունօղ աղօթից և կատարիչ խնդրուածաց: Լուեա՛ տէր 'ի պաղատանս իմ և ընկալ զիս մարդասիրութ. քո:

Մի՛ բարկութ. քո խրատեր զիս.



և

և մի՛ սրտմտութեամբ քո յանդիմաներ
զիս. զի դու ես տր և արարիչ. Հայր
և ստեղծիչ. և ես առ ո՛վ երթիցեմ
զի օգնութիւն իմ ՚ի քէն է:
Հայեաց ՚ի պաղատանս իմ. և ընկա՛լ
զիս մարդասիրութեամբ քո. զի քեզ մե-
ղայ և զքեզ աղաչիմ և զքեզ խոս-
տովանիմ: Մեղայ յերկինս և առա-
ջի քո. մի ընդ դատեալն տանջեր
զիս. և մի՛ ընդ դատապարտեալն
պատուհասեր: Այլ ընդ կամապար-
կամաց քոց ընկալցիս. և ընդ պա-
հօղս պատուիրանաց քոց պահեա՛
զիս. զի թէ առանց ներելոյ զա-
զրուամ յանցանս իմ քններս՝ ապա ըն-
դունայն է ինձ խոստովանն յորումն:
և հուր գեհեննին է ինձ ժառանգու-
թիւն: և թէ զգաստարկարանութիւն
իմ և զանդէպ զայլ անօրէնութիւն
իմ խնդրեսցես յինէն, ապա երա-
նեմ չեղելոյն յորովայնէ: Հայեա՛ց



տր

որ 'ի պաղատանս իմ և ընկալ զիս
մարդասիրութեամբ քո ։

Ողորմեա՛ ինձ որպէս քանանացւոյն, որպէս պոռնկին, որպէս մաքսաւորին. և գթա՛ յիս որպէս յանառակ որդին. և որպէս աւազակին շնորհեա՛ բազում յանցանաց իմոց զթողութիւն ։

Ընկալ զիս որպէս զհայհոյիչսն և զհալածիչսն. փարատեա՛ զխաւար մեղաց յաչաց իմոց ։ Բա՛ց զաչս իմ զլցեալս երկնային ցանկութեամբ երկնային լուսովդ. և բժշկեա՛ զվիրաւորեալ լեզուս իմ 'ի բանբասանաց ։

Սրբեա՛ զսիրտ իմ 'ի չար և 'ի պիղծ խորհրդոց. վասն զի քեզ ցանկամ անըրդ իմոյ բարերարի և բազմագութի իմոյ արարչիդ ։

Մի՛ յաւիտենական ամօթոյն ամաչեցուցաներ զիս. և մի՛ ահեղ դատաստանին դողացուցաներ ։

Մի՛ տխեղերական հրապարակաւն



զիս

զիս յանդիմաներ · և մի՛ անձներելի
տանջանացն մատներ ։

Այլ՝ ստակալ հրովն պատուհաներ ·
այլ փրկեա զիս 'ի հրացեալ հնոցէն,
'ի հրահոսեալ գետոյն և յորդանացն
չարաթունից, 'ի հանապազորդ նե-
ղութենէն և 'ի կրծոտել տառապանացն ։

Այլ ընտանեցո՛ զիս ընդ կամարարաց կա-
մաց քոց՝ յանանցանելին կենացն ։

Զի ընդ նոսին արժանի եղէց գոհա-
նալով փառաւորել զՀայր և զՈրդի
և զՍուրբ Հոգիդ · Ամէն ։

Զօրութիւն Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ
հրեշտակական վարդապետին ։ վասն այնոցին որ
ներքոյին ամ հեծութիւնք ։ և հասցին ողորմու-
թիւնքն ։ Գլուխ · ՂԵ ·

Սրբազանն արդար ճառագայթ
օրհնեալ ։ Լուսոյ կերպա-
րան ։ Փառաց անձկութեան ։ Խարձ-
րեալ անքննելին ։ Օրհնեալ անպատում ։



Խար

Նաւոյ բերկրութ։ Յուսոյ տեսու-
թե։ Գովեալ երկնաւոր։ Թագա-
ւոր փառաց։ Տ՟ր ողորմեա։ Խոստո-
վանեալ կեանք։

Եւ արդ՝ զթերութիս վրիպանաց բազ-
մախառն ձայնի եղկելոյս՝ ամենա-
զօրդ բանիւդ լցեալ՝ մատուցեա յա-
ղերս հայցմանց հօր քում բարձրելոյ։
Որ վ՟ն իմ 'ի փորձ եկիր անմեղ,
կերպարանեալ զիմ նմանութ, ամե-
նեւին կենաց օրինութ։ Վերնոց եւ
ներքնոց բարեխնամող տեսուչ հա-
մայնից։ Զի թէ յանձն առեր մե-
ռանել վ՟ն իմ ... եւ ոչ բռնադատեցան,
որչափ հաճեսցիս առաւել եւ այժմ
վտանգաւորս կրկին կարեկցել· ընդ
իմ սպառնաւորիս միշտ աղօթելով
աղաչանօք մարմնոյդ՝ առ երկ 'ի միջնորդ-
ութ. հաւատարիմ ... քո հօր։
Եւ վ՟ն արեանդ պատուականին միշտ
մատուցելոյ 'ի հաճութ կամացն


տալ

ռաքչիդ, բարձցին վտանգք մեղու-
ցեալ դատապարտելոյս: Թողցին
պարտիքն: Մաքրեսցի ամօթն:
Սնուասցին պատկառանքն: Բարե-
գործեսցին դատակնիքն Սասա-
կեսցին որդունքն: Վերասցի լալն:
Հանդարտեսցի կրճումն ատամանցն:
Սպառեսցին ողբքն: Հատցին արտա-
սուքն: Մերժեսցի սուգն: Հալա-
ծեսցի խաւարն: Վանեսցի հուրն
տատկուն: Հերքեսցին տանջանա-
րանքն բազմօրինակք:

Ելեսցեն գթութք կամողիդ և պար-
գևողիդ կենաց ամենից: Դադարե-
սցէ լալդ: Բարդեսցէ փրկութիդ:
Հասցէ օգնութիդ: Ժամանեսցէ այ-
ցելութիդ: Կանխեսցէ ցօղդ ողորմու-
թե: Յառաջեսցէ արբուսցէ զան-
դատանս պարզեալ անկեալ ուխ-
բույս թշուառութ' ի վերն մահու:
Դադարեսցէ պատարագեսցէ բաժա-
կըդ

կողդ երկնաւոր արեան կենարարէդ
զերկիրս խնամեալ յաւուրն լուսոյ ։
Որ անծախանս միշտ պատրաստ՝ յիշա
տակ կենաց փրկուե հոգոց ննջեցելոց
Ո՛, ի տէրէ մահացել հոգիս մարմնոյս
մեղաց՝ շնորհօք քո գթած ՚ի քեզ զօ
րացեալ՝ քև նորոգեսցայց՝ զատեալ
՚ի մեղաց անմահ կենդանութե ՚ի յա_
րութեն արդարոց՝ հօր քում օրհնեցել ։
Ընդ որում քեզ փառք՝ և հոգւոյդ
սբյ բարեբանութի վայելչական գո_
հութե՝ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն ։

Զօրաւոր Աղօթք տեառն Գրիգորի Նարեկացւոյ
հրեշտակական վարդապետի առ ՚ի պահպանութի
՚ի չարէ, և ՚ի քակտումն զօրութեան նորա ։
Գլուխ ․ ՂԳ ․



Տ յաւիտենական , բարե_
րար և ամենակալ ։ Ստեղ
ծիչ լուսոյ ․ և յօրի_
նիչ

նէջ գիշերոյ։ Կեանք 'ի մահու և լոյս
'ի խաւարի։ Յոյս ակն ունողաց, և
երկայնմտութիւն տարակուսելոց։ Որ
ամենարուեստ իմաստութ՟ քո դար-
ձուցանես յայգ զստուերս մահու։
Աննուաղ ծագումն և անմուտ արե-
գական։ Քանզի ոչ զօրէ ծածկել
զփառս տէրութ՟ քո խաւար գիշերոյ։
Որում կրկնի ծունր երկրպագութ՟
ամենեղելոց. երկնաւորաց և երկրա-
ւորաց և սանդարամետականաց։ Որ
լսես զհեծութի կապելոց, և հայիս
յաղօթս խոնարհաց, և ընդունիս
զխնդրուածս նոցա։ Ա՟ծ իմ և Թգ՟ւոր
իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յոյս
իմ և վստահութի իմ յ՟ս ք՟ս ա՟ծդ ա՟մե։
Ուրդ՝ հանգուցեալ 'ի հոգիս մեր։
Մխիթարութի վշտաց, և քաւարան
մեղուցելոց։ Որ գիտես զա՟մ յառաջ
քան զլինել նց՟. առաքեա զպահպա-
նողական զօրութի աջոյ քո. և փր-
կեա զիս յերկիւղէ գիշերի և ի գի-

ւէ չարէ ։ Ով զի զյիշել սոսկալի և
մեծ քո անուանդ՝ միշտ համբուրեալ
շրթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ , կե
ցեա պատսպարեալ ընդ այնոսիկ որ
կարդան զքեզ ՚ի բոլոր սրտէ ։ Եւ
՚ի դրոշմ խաչի քոյոյ նշանիդ՝ զոր
աստուածային արեամբդ քո ներկեալ նորո
գեցեր և ՚ի նոյն շնորհ որդեգրութեան
զմեզ սրբեցեր , և ՚ի փառս պատկե
րի քո նկարեալ յօրինեցեր , այսօ
պարգևօք աստուածակամօք , Ամաչեսցէ
սատանայ ։ Խափանեսցին մեքենայքն ,
Խզեսցին որոգայթքն ։ Վարատեսցին
մարտուցեալքն Պակասեսցին զէնքն
սայրասուրքն ։ Ներժեալ ՚ի մեզն ։ Փա
րատեսցին՝ խաւարն ։ Մեկնեսցին՝ մա
ռախուղն ։ Նշոյլ քո հովանացի ,
և աջ քո կնքեսցէ ։ Ով զի դթած
ես և ողորմած . և անուն քո կոչե
ցեալ է ՚ի մեզ ծառայից քոց ։ Եւ
քեզ ընդ հօր՝ հոգւոյդ սրբոյ փառք
իշխանութիւն և պատիւ ։ Այժմ և ։

Մաղթանք առ տր Աստուածն՝ և առ ամենասուրբն ող·
յետ եկեղեցին առաւ. Ե

Ածածին ամ՟նօրհ նեալ:
զպաշտպանս մեր ըն կալ.
՚ի հանգըստեան մա
մուս հասեալ. առ
քեզ գոչեմք անձամբ թախ ծեալ:

Նաւին կենաց բարձօղ է ղեր·
զքեզ մարմնով պատուագրե ցեր·
առ. բանն ՟տծ բարեխօս լեր·
՚ի փորձանաց ըզ մեզ փըր կել:

Գովեալ ես դու փայտ փըրկութե·
ամենօրհնեալ յաղթող նը շան·
՚ի գիշերիս ըստուերա կան·
Ծագեա մեզ զլոյսդ արփիա կան:

Դողան ՚ի քէն գունդք խաւարին·
ամենահըրաշ զէն արար չին·
որ մեզ պահեա շնորհիւ քո յին·
՚ի գիշերիս աղօթամըղ լին:

Նըրկոտասան ՟տր առա քո՛ալք·



Իօ

եօթանասուն աշակեր տեալք.
յանձնառու լուսոյն լոյս անուանեալք.
որթոյն կենաց պտղաբե րեալք:

Օ՛ ձեզ աղաչեմք առատասուա դին.
և պաղատիմք կողկողա գին.
վանիչ լերուք դիւաց դժն դին.
ոչ մերձենալ առ մեզ չա րին:

Յ՛ղին ընտրեալք բանին կե նաց.
դուամարք դասուց տեսանո ղաց.
որք զապագայն ժամանա կաց.
գուշակեցիք հոգւով շնոր հաց:

Ը՛նդ մեզ լերուք աղօթա կից.
որք աստուծոյ էք խօսա կից.
փրկել զմեզ 'ի վտան գից.
'ի յարթնութե և յերա զից:

Թ՛ագաւորին երկնաւո րի.
երկրպագող 'ի յարդան դի.
մեծ կարապետ ո͞ք ամբոր դի.
միջնորդ կենաց և օրի նի:
Ժ՛ամանեա մեզ 'ի յօգնու թիւն:

զի մի՛ մտցուք ՚ի փորձու   Թիւն.
մաքուր մարմնով լինել ՚ի   քուն.
արդար հոգւով մնալ ար   Թուն:

՚Ի քէն հայցեմք աստուածա   դին.
Նախախնամեայ տ͞ն արար   չին.
ո͞ր ստեփաննոս բացող զեր   կին.
տեսող զք͞ս յաջմէ ծնո   ղին:

Լ ե՛ր բարեխօս առեամբ քոյ   լին.
տալ մեզ հանդերձ ՚ի յանկո   ղին.
արթուն լինել յառաւօ   տին.
բարեբանել զլոյսն անքըն   նին:

Խնդրեմք ՚ի քէն հայր պատուական.
լուսաւորիչ ազգի մարդ   կան.
տ͞ր ո͞ր գրիգոր պետ պարթեւ   եան.
լե՛ր մեզ պարիսպ և պահա_   պան:

Ծնողաբար ՚ի մեզ գը   թա.
զցրուեալ որդիքս քո ժողո   վեա.
յուրախութիւն ընդ մեզ կո   չեա.
և ՚ի բարին առաջնոր   դեա:
Անդամնարար Թագաւո   րին.


դուք

Դուք ճշմարիտ զինուորք նր մին .
ո̄ր մարտիրոսք վկայք փրկ չին .
որք յաղթեցէք ըզթշնա մին :

զօրն յուսոյ միշտ մաղթե ցէք .
զորդին ընդ հօր աղաչե ցէք .
հոգւոյն շնորհօք մեզ օգնե ցէք .
և՛ի բանսարկուէն զմեզ թափե ցէք :

Զինաւափայլ երամք ընտ րեալ .
ճգնաւորաց դասք երա նեալ .
Թռչնոց երկնից էք նըմա նեալ .
յայրս և՛ի ծերպըս բընա կեալ :

Պօղեալ հոգւոց մեր ՚ի մար մին .
լերուք պարիսպք ընդդէմ չա րին .
զի յաղթեսցուք հակառա կին .
խորտակելով ըզ գլխս նո րին :

Դրադունք վառեալ լուսով ՚ի լր .
ո̄ր կուսանաց դասք երա նի .
արժան եղերուք աստուածա տին .
և անթառամ ո̄ր պըսա կին :

Մեզ բարեխօս լերուք սի րով .

առ Տէր Յիսուս աղերսե լով.
՚ի փորձանաց զմեզ փրկե լով.
յանշէջ հրոյն ազատե լով:

Յանեղ լուսոյ ա͞ծայ ին.
լուսոյ առեղծեալք բանիւ նո րին.
զարդարեցայք հոգւով շնոր հին.
դասք իմանալի զօրք երկնայ ին:

Նախախնամել զմեզ փութա ջիք.
և յօգնութիւն առ մեզ հա սիք.
որ յաստուծոյ հրաման ա ռիք.
ով ճշմարիտ մեր սիրե լիք:

Շնորհատու ազգի մարդ կան.
տէր մեր յիսուս անքննա կան.
ըզ մեզ պահեա՛ միշտ անսա սան.
աստի մինչ յօր քո գալըս տեան:

Ողորմութիւն մեզ պարգևե ա՛.
զհիւանդ հոգիս մեր բըժըշ կեա՛.
՚ի բանսարկուէն ըզմեզ փըր կեա՛.
և ՚ի չարեաց անփորձ պա հեա՛:

Զար իշխանքըն խաւա րին.
Ի


որք

որք ընդ ծառայս քո մարտըն չին.
քո նըշանաւ սըրբոյ խա չին.
աներեւոյթ կործանես ցին:

Պարգեւիչ բարեաց մարդ կան.
ամենառատ յամենե սեան.
պատրաստեցո՛ մեզ անխա փան.
զպէտըս հոգւոյ եւ մարմնա կան:

Տուր շընորհեա՛ ինձ արտասուա ց.
զի լըւացից զգործըս չա րեաց.
արժան եղէց քոց հարսա նեաց.
ընդ իմաստուն սուրբ կուսա նաց:

Ուահ բարի իմ տէր յի սուս:
եւ հաց կենաց սովեալ հոգ ւոյս.
առաջնորդեա՛ մոլորե լոյս.
եւ կերակրեա՛ զմիտս ընդ մարմնոյս:

Սրբեա՛ զհոգիս յաղտոյ մե ղաց.
՚ի զանազան չար փորձա նաց.
տո՛ւր ինձ գընալ ըստ քո կա մաց.
զի արժանի եղէց փա ռաց:

Ս էրաւորեաց զիս Թըշնա մին.



այն

այն որ չկամի զկեանս մարդկայ ին .
զիս բորբոքեալ տէր երկնայ ին .
լուսաւորեա լուսով քոյ ին :

Տրտմեալ հոգւոյս լեր բուժո ւիչ .
ցաւած մարմնոյս լեր դարման իչ .
մոլոր մտացս լեր ուղ ղիչ .
ամենատուատ բարեաց տր ծիչ :

Բազմից սրբոց աղաչա նաց .
իննեակ դասուց հրեղէն զօ րաց .
առաքելոց քոյ սիրո ղաց .
մարգարէից տեսանո ղաց :

Յանկալի հայրապե տաց .
և երջանիկ վարդապե տաց .
արիւնաներկ մարտիրո սաց .
և գերագոյն Ծնդնաւո րաց :

Միւսապրանց մր. կուսա նաց .
որք փեսայիդ այսատեն փա ռաց .
և ամենայն մաքուր ան ձանց .
հեռաւորաց քոյին կա մաց :

Փրկեալ զհոգիս 'ի տանջա նաց .



Զաղ

զազրատեսիլ կանքուն որ դանց·
լսել տուր զձայն քո անէ տեսաց·
զոր խոստացար քոց սիրո ղաց:
Ընդ Հօրդ փառք միշտ առաքեմք·
զորդիդ ընդ Հօրըդ դաւա նեմք·
ըզՀոգիդ սուրբ բարեբա նեմք·
երրորդութեանդ երկըրպա գեմք:

Ամէն:

Այ Հօր՝ ձեռնտուութեն օգ-
նականութեն և յաջողութեն
գոհութի և փառս մատուցա
նեմք՝ ընդ Որդւոյ և Սբյ Հոգւոյն:
Որ ետ կարողութի մեզ նուաստիցս՝
զսոյն զայս բարեխօսս մեղուցելոց
(այսինքն զտետրակս Աղօթից սրբոյ
Ասորանելւոյն Եփրեմի) ներկայս տա-
նել ի ձեռն տպագրեցման: Որք
կամին ստէպ մտաչիլ և յնդիման լինի
լալագին դիմօք առաջի աթոռոյ շնոր-

հացն մեզ. և լսել զերանաւէտ ձայն
նը. Թէ մի՛ լար դերբի՝ բազմաց ողջա
լի. այլ արի՛ առ զմիայնակ հոգւոյդ
քում զկենդանութի՝ զոր չարաչար
մեղօքդ մեռուցեր:

Այլ՝ որ զսա ընթեռնու՝ ոչ կարօ
տի ջրոյն սեղմնոյ առ ՚ի բուժել. այլ
յինքենէ բղխեալ ջուր արտասուաց՝
լինի աւազան շնորհաց և բուժէ՝
զախտս հոգեկան. ընդ նմին և ըզ
ցաւս մարմնական:

Որ է զինչ առաւել է զաղօթից. զի ա-
ղօթիցն գովութի ՚ի սրբցն անդր քան
զամ է. որով ինքեանք փայլեցան ՚ի
մարմնի՝ զանմարմնոյն բերելով յին-
քեանս զնմանութի. և հաճոյացան այ:
Ընդ որս և զմեզ մարդասէրն ած քա
ւեալ ՚ի մեղաց և արդարացուցեալ
՚ի ձեռն աղօթից՝ փոխեսցէ՝ յար-
քայութի որդւոյ իւրոյ սիրելւոյ ան
մերոյ յսի քսի: Որում փառք յա-
ւիտեանս ամէն:

Իսկ արդ՝ մինչ ընկալնուք զմխիթարութիւն ինչ հոգւոյ ձերոյ՝ 'ի յընթեռնուլն զՍուրբ զաղօթս, յիշեսջիք 'ի մաքուր յաղօթս ձեր զտպեցուցանօղն սորին զՄատթէոս վարդապետն ակնեցի, և զհոգաբարձու կարգեալն 'ի նմանէ տպման սորին զմահտեսի Աբրահամն հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնողօք իւրեանց. և որք յիշէքդ յիշեալ լիջիք 'ի Քրիստոսէ Յիսուսէ փրկչէն մերմէ. Ամէն:

Նոյնպէս յիշեցէք զտպագրիչն սորին զՄատթէոս դպիր յովհաննեան և զշարաբարդօղ և ցրուօղն կապարէից զմանուէլն մարուգէյեան և զօգնականն նորին զյարութիւն մաքտիրոսեանն և զմըրապարկն սորին զբալուցի յովհաննէսն դաբրիէլեան հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնողովք մերովք և որք յիշէքդ յիշեալ լիջիք 'ի Քրիստոսէ Յիսուսէ փրկչէն մերմէ. Ամէն:

Այդ սիրելի Ընթերցողք

որոց ծանօթութեանն եւ
խղճի հանդարտութեանն
սոյն աշխատասիրութիւն · ի Ձեռին
ունելով կարդացէք · առաջի
ԱԾյ · և ողորմածն ամենայնի
Յիշել աղօթից ձերոց · և
ի [illegible] Տէրն բարձրն հա-
տուցէ : [illegible]
եւ յիշեցէք [illegible] ողոր-
մեալս · եւ դուք յիշեալ լի-
ցիջիք առաջի ԱԾյ :

Ան· ողորմի Ձեզ և
[illegible] [illegible]

Գ. [illegible]